ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 12 » հոկտեմբերի 2023թ. № **103 -Ա**

ԱՐԿԱԴԻ ՄԿՐՏԻՉԻ ԲՈՅԱԽՉՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արկադի Մկրտիչի Բոյախչյանին սեփականության իրավունքով պատկանող «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ ք. Ս.Ավետիսյան փողոց 336 խանութ» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0502-0044 կադաստրային ծածկագրով 0,0180 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության և «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ ք. Ս.Ավետիսյան փողոց 365» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0502-0045 կադաստրային ծածկագրով 0,003 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերին կից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ս.Ավետիսյան փողոց, 26/3 հողամաս» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0502-0051 կադաստրային ծածկագրով 0,00229 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 6-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված չափորոշիչներին և որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, հիմք ընդունելով Արկադի Մկրտիչի Բոյախչյանի դիմումը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համաձայնություն տալ «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Ս.Ավետիսյան փողոց 336 խանութ» և «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Ս.Ավետիսյան փողոց 365» հասցեներում գտնվող՝ Արկադի Մկրտիչի Բոյախչյանին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0502-0044 կադաստրային ծածկագրով 0,0180 հեկտար մակերեսով և 06-006-0502-0045 կադաստրային ծածկագրով 0,003 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ս.Ավետիսյան փողոց, 26/3 հողամաս» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0502-0051 կադաստրային ծածկագրով 0,00229 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման

գործառնական նշանակության հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով օտարելուն:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնի չափով՝ 66 123,75 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 2887,5 ՀՀ դրամ):

ԿՈՂՄ (12)	ԴԵՄ (1)	ՁԵՌՆՊԱՀ (1)
ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ	ԿԱՐԻՆԵ ԴԻԼԱՔՅԱՆ	ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ		
ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ		
ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ		
ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ		
ԳԵՎՈՐԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ		
ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ		
ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ		
ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ		
ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ		
ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ		
ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 12
ք. Սպիտակ